

3.2 Հայտի ներկայացման գործընթաց

3.2.1

Ընտրություններին մասնակցելու համար Շահագրգիռ անձինք մինչև 2010թ. մայիսի 7-ի ժամը 18⁰⁰-ը պետք է ներկայացնեն մասնակցության հայտը և պահանջվող փաստաթղթերը: Փաստաթղթերը պետք է ներկայացվեն ՀՄՀ-Հայաստան գրասենյակ Հայաստան - 0010, Երևան, Մելիք-Աղամյան փ., 2/1 հասցեով (ՇԽ օգնականին) կամ ուղարկել elections@mca.am էլ. հասցեին:

3.2.2

ՇԽ օգնականն ընդունում է ընտրության մասնակցության հայտերը և հայտի ընդունումը հաստատում է ստացականով, որում նշվում է հայտի հանձնել-ընդունելու ժամանակը: Էլեկտրոնային կամ սովորական փոստով հայտերի ստացումը եւ վավերականությունը հավաստելու համար ՇԽ օգնականն ուղարկում է համապատասխան էլեկտրոնային նամակ կամ գրություն:

Ընտրությունների մասնակցի (որպես ընտրող և ընտրվող) ներկայացրած հայտի և սույն կարգի պահանջների միջև անհամապատասխանության դեպքում, հայտատու մասնակիցը անմիջապես կտեղեկացվի անհամապատասխանության կամ թերի տեղեկատվության մասին: Ծանուցումից հետո մասնակիցության հավակնորդը հնարավորություն կունենա հինգ աշխատանքային օրվա ընթացքում լրացնել/ուղղել հայտում առկա թերությունները: Եթե տրված ժամանակահատվածում թերությունները չեն վերացվում ընտրական հանձնաժողովին բավարարող ձևով, հայտը մերժվում է ընտրական հանձնաժողովի կողմից որի մասին գրավոր ծանուցվում է անձին՝ նշելով հայտի մերժման հիմքերը:

3.2.3

Ընտրական հանձնաժողովը ստուգում և գնահատում է բոլոր ստացված հայտերը և կազմում է մասնակիցների ցուցակը՝ համաձայն ընդունված հայտերի, հայտատու անձանց կողմից ներկայացվող կազմակերպությունների անվանումների այբբենական կարգով և մինչև 2010թ. մայիսի 17-ը հրապարակում այն՝ ցանկը տեղադրելով ՀՄՀ-Հայաստան ծրագրի պաշտոնական վեբ կայքում. www.mca.am հասցեով: